



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. սեպտեմբերին /վերլուծություն/

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 8058 գործարքներ, որոնց քանակը 2003թ. սեպտեմբերի համեմատ աճել է 20.5%-ով, իսկ 2004թ. օգոստոսի համեմատ՝ նվազել 2.2 %-ով:

2004թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3257 օտարման գործարքների 89.2 %-ը կազմել են առուվաճառքները, 10.3 %-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 44.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 45.4%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. սեպտեմբերին, 2003թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 11.4 %-ով, իսկ 2004թ. օգոստոսի համեմատ՝ նվազել 4.7 %-ով: 2004թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի 1252 առուվաճառքի գործարքների 65.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2003թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 10.0 %-ով, իսկ 2004թ. օգոստոսի համեմատ՝ 5.1 %-ով:

2004թ. սեպտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. սեպտեմբերին համարժեք է 513.3 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. սեպտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		սեպտեմբեր 2003թ.	սեպտեմբեր 2004թ.	օգոստոս 2004թ.
Կենտրոն	350.0-970.0	396.1	479.5	471.5
Արաբկիր	250.0-560.0	300.5	377.2	370.9
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	186.4	231.4	227.5
Նոր-Նորք	115.0-250.0	147.1	199.8	195.7
Ավան	120.0-230.0	146.2	192.7	189.5
Էրեբունի	120.0-300.0	156.1	186.5	181.8
Շենգավիթ	120.0-270.0	157.4	222.5	215.5
Դավթաշեն	130.0-320.0	185.2	238.2	234.2
Աջափնյակ	120.0-300.0	162.2	217.8	213.6
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	152.1	218.5	211.7
Նուբարաշեն	65.0-120.0	69.0	83.5	80.2
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	187.1	240.7	235.6

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. սեպտեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 2.1 %:

2004թ. սեպտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 441 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 3.5%-ով, իսկ 2004թ. օգոստոսի համեմատ՝ 3.9 %-ով:

2004թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. սեպտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			սեպտեմբեր 2003թ.	սեպտեմբեր 2004թ.	օգոստոս 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.6	67.5	66.5
	Ապարան	18.0-50.0	27.3	37.8	37.5
	Թալին	18.0-40.0	25.2	31.8	31.8
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.6	56.5	56.2
	Մասիս	20.0-90.0	54.4	63.0	61.5
	Վեդի	20.0-60.0	31.7	42.6	42.5
	Արարատ	22.0-50.0	31.5	41.0	39.9
Արմավիր	Վաղարշապատ	35.0-110.0	84.5	101.6	100.6
	Արմավիր	21.0-80.0	45.5	64.5	62.5
	Մեծամոր	17.0-50.0	30.9	32.6	32.6
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.6	34.8	34.8
	Գավառ	20.0-50.0	30.4	33.6	33.6
	Մարտունի	18.0-60.0	29.6	36.6	36.6
	Վարդենիս	10.0-35.0	17.3	17.6	17.6
	Ճամբարակ	13.0-30.0	16.8	17.9	17.9
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	60.9	62.5	62.3
	Ստեփանավան	20.0-48.0	33.2	36.6	36.5
	Սպիտակ	17.0-50.0	24.0	40.8	38.8
	Ալավերդի	15.0-40.0	25.5	26.5	26.5
	Տաշիր	15.0-40.0	19.3	25.5	25.5
Կոտայք	Աբովյան	40.0-150.0	84.0	100.5	97.8
	Նոր Հաճն	35.0-100.0	52.3	70.5	65.8
	Բյուրեղավան	15.0-60.0	35.2	48.8	45.6
	Եղվարդ	28.0-65.0	40.7	50.5	50.5
	Հրազդան	18.0-65.0	30.8	42.7	40.5
	Ծաղկաձոր	22.0-100.0	75.8	88.7	85.6
	Չարենցավան	13.0-55.0	31.1	41.5	40.5
Շիրակ	Գյումրի	30.0-110.0	71.7	76.2	75.2
	Արթիկ	17.0-45.0	25.3	31.4	31.4
	Մարայիկ	15.0-33.0	23.7	28.4	28.4
Սյունիք	Գորիս	21.0-50.0	29.7	37.5	37.5
	Կապան	18.0-52.0	29.3	33.8	33.8
	Սիսիան	17.0-48.0	27.6	35.7	35.7
	Մեղրի	18.0-58.0	25.2	25.5	25.4
	Ագարակ	18.0-50.0	23.1	25.2	25.2
	Քաջարան	13.0-30.0	18.5	19.9	19.9
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.3	39.2	38.5
	Եղեգնաձոր	20.0-60.0	46.9	50.2	49.2
	Ջերմուկ	18.0-90.0	41.2	55.6	50.0
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.2	43.5	42.8
	Իջևան	23.0-80.0	40.4	53.0	51.0
	Բերդ	15.0-43.0	29.3	33.5	31.5
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.8	27.7	27.7

2004թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների ամսեկան աճը կազմել է 2.1%:

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 423 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 110, մյուս մարզերում միասին վերցրած՝ 313: 2004թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 7.8 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 8.3 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 7.7%-ով: 2003թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.2 %-ով, ընդ որում Երևանում՝ 5.2 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել է 0.3 %-ով:

2004թ. սեպտեմբերին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. սեպտեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		սեպտեմբեր 2003թ.	սեպտեմբեր 2004թ.	օգոստոս 2004թ.
Կենտրոն	255.0-1000.0	410.0	480.0	475.2
Արաբկիր	205.0-900.0	305.0	384.8	383.6
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	189.0	231.9	227.9
Նորք-Մարաշ	120.0-550.0	303.0	340.2	338.6
Ավան	125.0-280.0	147.0	193.5	189.9
Էրեբունի	130.0-320.0	157.0	187.6	185.5
Շենգավիթ	120.0-350.0	158.0	223.6	216.2
Դավթաշեն	140.0-700.0	186.0	239.1	234.7
Աջափնյակ	125.0-320.0	163.0	218.8	213.9
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	153.0	219.8	211.9
Նուբարաշեն	65.0-150.0	72.0	83.8	81.2
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>65.0-1000.0</b>	<b>203.9</b>	<b>254.8</b>	<b>250.8</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.6%:

2004թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. սեպտեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			սեպտեմբեր 2003թ.	սեպտեմբեր 2004թ.	օգոստոս 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.7	86.7	86.1
	Ապարան	25.0-60.0	38.8	39.0	39.0
	Թալին	20.0-65.0	28.1	34.8	33.4
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.8	62.1	62.1
	Մասիս	50.0-90.0	62.4	63.6	63.5
	Վեդի	25.0-70.0	36.3	49.4	46.5
	Արարատ	20.0-65.0	37.4	44.7	41.5
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	89.5	105.6	101.9
	Արմավիր	35.0-90.0	52.2	65.2	63.1
Գեղարքունի ք	Սևան	20.0-60.0	36.4	41.2	36.4
	Գավառ	20.0-60.0	39.9	39.9	39.9
	Մարտունի	20.0-60.0	33.9	40.9	37.4
	Վարդենիս	15.0-50.0	21.3	21.3	21.3
	Ճամբարակ	15.0-50.0	19.4	20.3	20.3
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	68.6	70.1	70.0
	Ստեփանավան	15.0-60.0	33.6	43.1	38.2
	Սպիտակ	20.0-60.0	24.1	42.9	39.5
	Այվերդի	15.0-50.0	25.9	27.8	27.5
Կոտայք	Տաշիր	15.0-55.0	19.9	26.3	26.1
	Աբովյան	70.0-120.0	92.3	101.6	98.4
	Նոր Հաճն	40.0-90.0	54.2	72.2	66.3
	Բյուրեղավան	25.0-70.0	38.2	49.0	46.1
	Եղվարդ	40.0-80.0	47.3	52.2	52.1
	Հրազդան	25.0-65.0	39.9	44.9	40.7
	Ծաղկաձոր	70.0-120.0	85.2	96.1	91.2
Չարենցավան	25.0-65.0	33.4	42.1	41.0	
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	90.8	91.6	91.6
	Արթիկ	20.0-55.0	28.7	33.2	32.8
	Մարալիկ	15.0-50.0	23.9	29.5	29.4
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.6	38.4	38.0
	Կապան	20.0-60.0	31.1	35.5	35.3
	Սիսիան	20.0-60.0	28.7	36.6	36.5
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.2	28.2
	Ագարակ	15.0-50.0	25.5	28.3	28.2
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	39.5	39.5
	Եղեգնաձոր	35.0-80.0	49.2	50.3	50.1
	Ջերմուկ	25.0-65.0	43.2	44.3	44.3
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	39.2	50.6	44.9
	Իջևան	35.0-80.0	41.2	54.8	52.6
	Բերդ	20.0-60.0	30.9	33.6	31.7
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.0	30.9

2004թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 3.3%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարվել են 1072.23 հա /այդ թվում 36.10 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1005.95 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1063.16 հա հողերի /այդ թվում 36.06 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 997.88 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 2 միավոր արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.48 հա/ Երևան քաղաքում և 1 միավոր /1.18 հա/ Կոտայքի մարզում:

Օտարված 9.02 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 8.07 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Երևանում փոխանակման միջոցով օտարվել են 0.05 հա ընդհանուր մակերեսով հողեր: Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 613.67 հա, որից 610.38 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. սեպտեմբերին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	62	10.57	25	7.38	0	0.00	70	13.50	26	4.13
Արագածոտն	11	105.69	0	0.00	3	0.11	50	32.50	21	1.94	0	0.00
Արարատ	84	142.72	35	3.70	0	0.00	65	33.92	41	4.05	0	0.00
Արմավիր	29	457.35	0	0.00	0	0.00	76	153.03	25	3.28	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	6	12.28	1	0.21	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	12	4.03	4	0.89	4	0.24
Կոտայք	9	9.80	0	0.00	0	0.00	72	21.07	113	11.85	1	0.27
Շիրակ	1	5.00	0	0.00	1	0.01	6	8.80	3	0.07	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	6	10.11	1	0.07	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	3	0.30	3	0.56	0	0.00	1	0.24
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	3	1.03	2	0.09	2	0.72
<b>ԸՆԴԱՄԵՆՆԵՐ</b>	<b>134</b>	<b>720.56</b>	<b>97</b>	<b>14.27</b>	<b>32</b>	<b>7.82</b>	<b>299</b>	<b>277.33</b>	<b>281</b>	<b>35.95</b>	<b>34</b>	<b>5.60</b>

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հողերի 879 առուվաճառքի գործարքներ, այդ թվում 433-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 444-ը՝ բնակավայրերի հողերի նկատմամբ:

2004թ. սեպտեմբերին հողերի առուվաճառքներից 232-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 59-ը՝ Երևանում /9.17 հա/, իսկ 173-ը՝ մյուս մարզերում /719.67 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 132 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /715.56 հա/, 86-ը՝ /12.37 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 14-ը՝ /0.91 հա/ հասարակական կառուցապատման հողեր:

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 433 գործարքներ, այդ թվում աճուրդով՝ 132, դատարանի վճռով՝ 1 և ուղղակի վաճառքով՝ 2 գործարքներ:

Մտորն աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	11	105.69	50.0	730.0	130.0	43	12.65	800.0	10000.0	2900.0
Ապարան						1	0.33	200.0	1700.0	550.0
Թային						3	2.55	200.0	1680.0	470.0
Ծաղկահովիտ						2	11.64	170.0	2100.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	57	84.74	35.0	7645.0	1285.0	29	7.55	740.0	12000.0	2200.0
Մասիս	5	45.21	160.0	600.0	450.0	12	3.40	400.0	8800.0	1650.0
Վեդի	22	12.77	1670.0	2990.0	2555.0	24	22.97	450.0	7200.0	1330.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						14	107.39	650.0	4650.0	1390.0
Բաղրամյան	26	450.95	70.0	2310.0	1270.0	17	22.24	200.0	1500.0	550.0
Վաղարշապատ	3	6.40	150.0	220.0	175.0	45	23.40	980.0	14000.0	2220.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						2	0.40	420.0	1100.0	620.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						4	11.88	60.0	1180.0	270.0
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի						3	0.49	360.0	5500.0	920.0
Գուգարք								500.0	6000.0	1780.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						9	3.54	180.0	4000.0	480.0
Տաշիր								100.0	400.0	250.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	3	3.00	110.0	935.0	385.0	43	11.00	600.0	20000.0	5100.0
Եղվարդ						26	7.68	380.0	10000.0	3470.0
Հրազդան	4	1.80	530.0	640.0	585.0	3	2.39	250.0	6000.0	950.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						4	5.81	550.0	2500.0	740.0
Ամասիա								80.0	525.0	180.0
Անի	1	5.00	400.0	400.0	400.0	2	2.99	240.0	800.0	300.0
Աշոցք								60.0	210.0	150.0
Արթիկ								140.0	800.0	300.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								200.0	1600.0	500.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի						1	0.23	400.0	4240.0	850.0
Սիսիան						5	9.88	90.0	1500.0	310.0

Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	0.56	260.0	4000.0	2250.0
Վայք								120.0	3400.0	900.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.23	100.0	2000.0	650.0
Իջևան						2	0.80	530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան								100.0	8340.0	620.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 246 առուվաճառքի գործարքներ, որից 35-ը աճուրդային վաճառքներ, 1-ը՝ դատարանի վճռով վաճառքի գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքի տվյալները..

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						17	15195.0	250.0	8000.0	3000.0
Ապարան						1	1800.0	250.0	1400.0	340.0
Թային						3	2440.0	100.0	800.0	140.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	7	9883.0	210.0	490.0	370.0	6	7530.0	300.0	6000.0	950.0
Մասիս	19	17515.0	320.0	770.0	455.0	28	26010.0	300.0	20000.0	1200.0
Վեդի	9	9606.0	90.0	1270.0	480.0	7	6933.0	250.0	2200.0	730.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						6	5430.0	300.0	5000.0	1100.0
Բաղրամյան						1	2000.0	180.0	600.0	210.0
Վաղարշապատ						18	25413.0	300.0	10000.0	1750.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								300.0	2000.0	600.0
Ճամբարակ								100.0	300.0	150.0
Մարտունի								200.0	600.0	250.0
Սևան						1	2100.0	200.0	2000.0	260.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						2	3635.0	150.0	5200.0	820.0
Սպիտակ						1	2210.0	140.0	900.0	180.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						31	31733.0	300.0	10000.0	2100.0
Եղվարդ						80	85690.0	300.0	10000.0	2450.0
Հրազդան						2	1120.0	300.0	8000.0	1550.0



Շիրակի մարզ										
Ախուրյան						3	723.2	250.0	3400.0	420.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ								150.0	900.0	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	650.0	150.0	1200.0	400.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան								150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր								150.0	2200.0	350.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						1	120.0	150.0	2200.0	600.0
Նոյեմբերյան						1	780.0	100.0	1400.0	210.0

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 13 գործարքներ 6.66 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 7-ը Արարատի /0.95 հա/ , 3-ը՝ Շիրակի /4.29 հա/ և 3-ը՝ Սյունիքի /1.43 հա/ մարզերում:

2004թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 692 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.6 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 32.1 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 3.6 %-ով, իսկ 2003թ. սեպտեմբերի համեմատ՝ աճել է 29.6 %-ով:

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 41 բնակարանների, 18 անհատական բնակելի տների, 158 հասարակական, 27 արտադրական նշանակության օբյեկտների, 445 միավոր հողերի, 2 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ:

2004թ. սեպտեմբերին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 43 վարձակալության գործարքների քանակները 2004թ. օգոստոսի համեմատ նվազել են 31.7 %-ով, իսկ 2003թ. սեպտեմբերի համեմատ՝ աճել են 13.2 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. սեպտեմբերին հանրապետությունում վարձակալվել են 2076.53 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 2.96 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1985.97 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 17.89 հա բնակավայրերի, 15.06 հա արդյունաբերական օբյեկտների, 53.11 հա հատուկ պահպանվող տարածքների և 1.54 հա էներգետիկայի օբյեկտների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Շիրակի մարզում՝ 780.94 հա, որից 776.23 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. սեպտեմբերին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 165.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. սեպտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	17	72.29
Արարատ	0	0.00	23	520.68
Արմավիր	0	0.00	8	113.32
Գեղարքունիք	5	80.00	26	80.73
Լոռի	2	5.00	7	125.09
Վոտայք	0	0.00	20	70.12
Շիրակ	1	65.00	68	711.23
Սյունիք	1	15.00	23	67.61
Վայոց Ձոր	0	0.00	18	41.70
Տավուշ	0	0.00	4	18.20
<b>Ընդամենը</b>	<b>9</b>	<b>165.00</b>	<b>214</b>	<b>1820.97</b>

2004թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 577 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.2 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. սեպտեմբերի համեմատ աճել է 40.7 %-ով, իսկ 2004թ. օգոստոսի համեմատ՝ 10.5 %-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 35.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.1%/, առանձնատների /17.7%/ և հողերի /9.4%/, նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 301 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. օգոստոսի համեմատ, նվազել է 8.5%-ով, իսկ 2003թ. սեպտեմբերի համեմատ՝ աճել է 38.7 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 31.51 հա /այդ թվում 0.88 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 30.35 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արարատի մարզում՝ 13.30 հա, որից 13.02 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 10 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2003թ. սեպտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 54.8 % -ով, իսկ 2004թ. օգոստոսի համեմատ՝ 46.2 %-ով: 2004թ. սեպտեմբերին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 42.9 %:

2004թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1374 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. սեպտեմբերի համեմատ աճել է 27.9 %-ով, իսկ 2004թ. օգոստոսի համեմատ՝ նվազել է 10.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակաբար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /48.5%/:

### **ԱԳՎՊԿ լրատվական ծառայություն**